# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/24 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «10» հուլիսի 2020թ.

2020թ-ի հուլիսի 1-10-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բյուզանդի փ. 1/3 հասցեում գտնվող «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի գրասենյակում տեղի ունեցավ ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/24 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | |
|---|---|
| Ա. Ասատրյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տեխնիկական բաժնի պատասխանատու (հանձնաժողովի նախագահ). |
| Ա. Ալեքյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի ավագ տեխնիկական մասնագետ. |
| Գ. Օհանյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տրանսպորտային միջոցների շահագործման պատասխանատու. |
| Հ. Գուլաբյան | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ ներկայացուցիչ (հանձնաժողովի քարտուղար): |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Ասատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Հ. Գուլաբյանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/24 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

## 1. ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/24 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1 | Մալուխների ցանցի և իր բաղադրիչների ապամոնտաժման և մոնտաժման ծառայություններ | - |

ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/24 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են ՀՀ, ք. Երևան, Փ. Բյուզանդի փ. 1/3 շենք հասցեում, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի հուլիսի 1-ին, ժամը «11:30»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/24 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Յան Բիլդինգ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ 2րդ. Թունել 2 ն, տ.3 | +374 91 914 479 | yan.building@mail.ru | 00168853 |
| 2 | «Նեթվորք Բիլդերս» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ավանեսով 5 15 | +374 91 226 023 | info@networkbuilders.am | 00459127 |
| 3 | «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Աւարոնյան 2, 5-րդ հարկ | +374 96 535 842 | kakoyan@hs.am | 00157195 |
| 4 | «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան, Հր. Քոչար 15 | +374 99 905 335 | eic-tender@mail.ru | 01574474 |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Հայտ/եր/ը կազմվել և ներկայացվել են ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/24 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան,
- Ներկայացված հայտ/եր/ում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- Ներկայացված հայտ/եր/ում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

- **«Յան Բիլդինգ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված Հավելված 1-ում իրական շահառուների վերաբերյալ աղյուսակը լրացված է թերի, մասնավորապես՝ տվյալները լրացված են սխալ վանդակներում;

- **«Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված ծրարում առկա փաստաթղթերի վրա բացակայում են՝ «բնօրինակ» և «պատճեն» նշումները:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

| Չ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակիցների առաջարկած գները՝ | |
|---|---|---|---|
| | | Արժեք | Ընդհանուր գին |
| 1* | «Նեթվորք Բիլդերս» ՍՊԸ | 700 | 700 |
| | «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ | 667 | 800 |
| | «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ | 12000000 | 14400000 |
| | «Յան Բիլդինգ» ՍՊԸ | 600 | 720 |

* Վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացված են ստորև.

Որոշվեց՝

1. Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

2. Քարտուղարին՝ նիստը կասեցնել և ծանուցել «Յան Բիլդինգ» ՍՊԸ-ին և «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովն արձանագրեց, որ «Յան Բիլդինգ» ՍՊԸ-ի և «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Որոշվեց՝

3. Ներկայացված հայտ/եր/ը գնահատել բավարար:

4. Նիստը կասեցնել գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նպատակով:

5. Քարտուղարին՝ ծանուցել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին՝ գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման մասին:

Կողմ՝ 3

Դեմ՝ 0

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ /այսուհետ նաև՝ Բանակցություններ/՝ առաջարկված գների նվազեցման նպատակով:

08.07.2020թ. կայացան գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները: Բանակցություններին մասնակցում էր բավարար գնահատված և

Բանակցություններին հրավիրված բոլոր մասնակիցները, որոնցից «Յան Բիլդինգ» ՍՊԸ-ի և «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի անունից ներկա էին վերջիններիս լիազորված անձինք:

Հանձնաժողովի նախագահը արձանագրեց, որ «Յան Բիլդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցչի լիազորագիրը իրավունք չի վերապահում վերջինիս՝ Բանակցությունների ընթացքում «Յան Բիլդինգ» ՍՊԸ-ի անունից ներկայացնել նոր նվազեցված գնային առաջարկ և տվեց հանարավորություն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նոր լիազորագիր, պայմանով, որ նշյալ ժամկետում չներկայացնելու դեպքում վերջինիս կողմից ներկայացված նոր գնային առաջարկը կհամարվի առոչինչ:

Բանակցություններին ներկա էր նաև «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տնօրեն Վ. Հարությունյանը: Նախքան բանակցությունների մեկնարկը՝ վերջինս ներկա մասնակիցներին մանրամասնորեն նկարագրեց ձեռք բերվող ծառայության տեխնիկական բնութագիրն ու պահանջները: Ներկայացնելուց հետո մասնակիցների կողմից որևէ հարցեր չներկայացվեցին, որից հետո Հանձնաժողովի նախագահը Բանակցությունների համար սահմանեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ և Բանակցությունները համարեց սկսված:

Բանակցությունների վերջնաժամկետին՝ մասնակիցների կողմից ներկայացվեցին նոր նվազեցված գնային առաջարկներ, որոնք ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

| Չափաբաժնի N | Չափաբաժնի Անվանում | Քանակ (դրամ) | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը | Մասնակցի անվանում | Մասնակցի կողմից ներկայացված նոր նվազեցված գնային առաջարկ /ՀՀ դրամ/ Գինը, առանց ԱԱՀ | Գինը, ներառյալ՝ ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մալուխների ցանցի և իր բաղադրիչների ապամոնտաժման և մոնտաժման ծառայություններ | 1 | - | «Նեթվորք Բիլդերս» ՍՊԸ | 480 | 480 |
| | | | | «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ | 590 | 708 |
| | | | | «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ | 470 | 564 |
| | | | | «Յան Բիլդինգ» ՍՊԸ | 550 | 660 |

Հանձնաժողովն արձանագրեց, որ «Յան Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել լիազորագրի շտկված տարբերակը, ինչի արդյունքում որոշվեց՝ «Յան Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նվազեցված գնային առաջարկը համարել առոչինչ:

## 2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց իր կողմից պատճառաբանված որոշման բացակայությունը՝ Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել ներքոնշյալ աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

| Չ/հ | Մասնակցի | | | Մասնակիցների առաջարկած գները՝ | |
|---|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «X» | Անվանում | Արժեք | Ընդհանուր գին |
| 1* | 1 | X | «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ | 470 | 564 |
| | 2 | | «Նեթվորք Բիլդերս» ՍՊԸ | 480 | 480 |
| | 3 | | «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ | 590 | 708 |
| | 4 | | «Յան Բիլդինգ» ՍՊԸ | 600 | 720 |

2. Որպես ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 3

Դեմ՝ 0

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3

Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ասատրյան __________

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ալեքյան __________

Գ. Օհանյան __________

Հանձնաժողովի քարտուղար՝

Հ. Գուլաբյան __________